ARMENIA INSURANCE

# «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ

## ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ




+374 11 56 04 04 +374 12 56 04 04
www.armeniainsurance.am
Վարդանանց 16, տարածք 1/1
info@armeniainsurance.am

Հարգելի հաճախորդ,

Ուրախ ենք տեղեկացնել, որ «Արմենիա Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ն շարունակում է առողջության ապահովագրության ծառայություններ մատուցել ԵՊՀ աշխատակիցներին և նրանց ընտանիքի անդամներին:
Խնդրում ենք ուշադիր ծանոթանալ առողջության ապահովագրության սույն պայմաններին:



Լրացուցիչ տեղեկությունների համար կամ հարցերի դեպքում կարող եք զանգահարել շուրջօրյա հեռախոսազանգերի կենտրոն՝
011/012 560404
հեռախոսահամարներով:



ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

# ՄԵՐ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ճկուն սակագնային համակարգ՝ կախված ապահովագրվող աշխատակազմի թվաքանակից, տարիքային կազմից և ապահովագրական պատմությունից,
- Առաջարկվող Ապահովագրական ծրագրերի փոփոխման հնարավորություն,
- Ապահովագրավճարի տարաժամկետ վճարման հնարավորություն,
- Ապահովագրությունն իրականացվում է առանց ընդհանուր բժշկական նախազննման
- ՀՀ տարածքում լիցենզավորված բժշկական հաստատություններ, ատամնաբուժարաններ և լաբորատորիաներ դիմելու հնարավորություն,
- Ապահովագրողի կողմից բժշկական կենտրոններ ուղղորդելու պրակտիկայի բացակայություն,
- Բժշկական օգնության տրամադրում՝ առանց թղթային ուղեգրման անհրաժեշտության,
- Մատուցվող բժշկական ծառայությունների և սպասարկման որակի մշտական վերահսկում:



Նախատեսված բժշկական ծախսերը հատուցվում են ողջամիտ չափով՝ պայմանով, երբ իրականացված բուժումը և/կամ բուժական միջոցները իրավասու բժշկական մարմինների կողմից ճանաչվում են որպես անհրաժեշտ՝ տվյալ հիվանդության, վնասվածքի կամ բժշկական վիճակի համար:

# ՀԱՏՈՒՑՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

## ՇՏԱՊ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Շուրջօրյա հեռախոսակապ բժիշկ-փորձագետի հետ | |
| Շտապ օգնության ծառայություն (Շտապ օգնության խմբի շուրջօրյա այց, այդ թվում՝ մասնագիտացված) | |
| Անհետաձգելի բուժման դեղորայքային ապահովում | |
| Հոսպիտալացում մասնագիտացված բրիգադայի ուղեկցությամբ | |
| Նեղ մասնագիտական առաջնային բուժզննում և օգնություն | |
| Բժիշկ-թերապևտի տնային կանչ Բժշկական հաստատություն այցելելու անհնարինության դեպքում (Երևանում) | |
| Էքսպրես-դիագնոստիկա | |





ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

## ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՆԱՄՔ

| | |
|---|---|
| Դժբախտ պատահարների հետևանքով հոսպիտալացում | |
| Թերապևտիկ հիվանդությունների բուժում | |
| Վիրաբուժական հիվանդությունների բուժում | |
| Ինֆեկցիոն հիվանդությունների բուժում | |
| Տարբեր տեսակի վնասվածքների (կոտրվածքների, հոդախախտերի, վերքերի, սալջարդերի, պոլիտրավմաների) բուժում | |
| Ներքին և արտաքին արյունահոսությունների բուժում | |
| Այրվածքների, ցրտահարությունների և էլեկտրահարությունների բուժում | |
| Թունավորումների բուժում | |
| Ինտենսիվ թերապիա և ռեանիմացիոն միջոցառումներ պահանջող անհետաձգելի վիճակների բուժում | |
| Ներհիվանդանոցային գործիքային հետազոտություններ.<br>- ռենտգենոլոգիական<br>- ուլտրաձայնային<br>- ռադիոիզոտոպային հետազոտություններ<br>- ֆունկցիոնալ հետազոտում (ԷՍԳ, էլեկտրամիոգրաֆիա, սպիրոգրաֆիա, դոպլեր, դուպլեքս հետազոտություններ)<br>- Էնդոսկոպիկ հետազոտություններ նաև ընդհանուր անզգայացմամբ (էզոֆագոգաստրոդուոդենոսկոպիա, կոլոնոսկոպիա, ցիստոսկոպիա, բրոնխոսկոպիա)<br>- անգիոգրաֆիա<br>- նեյրոֆիզիոլոգիական հետազոտություններ (ԷԷԳ, Էխո ԷԷԳ, աուդիոմետրիա),<br>- համակարգչային տոմոգրաֆիա<br>- մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա<br>- էլեկտրոֆիզիոլոգիական հետազոտություն | |
| Ներհիվանդանոցային լաբորատոր հետազոտություններ.<br>- բիոքիմիական<br>- հյուսվածքաբանական (հիստոլոգիական)<br>- հորմոնալ<br>- իմունոլոգիական<br>- միկրոբիոլոգիական<br>- ընդհանուր կլինիկական հետազոտություններ<br>- ցիտոլոգիական (բջջաբանական) հետազոտություններ | |
| Վճարովի հիվանդասենյակների տրամադրում | Հատուցվում է օրական մինչև 15.000 ՀՀ դրամ |



ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

# ՍՐՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| **Կոնսերվատիվ սրտաբանություն** | Հատուցվում է տարեկան մինչև 2.000.000 ՀՀ դրամ |
| **Ինվազիվ հետազոտություններ. (այդ թվում պլանային կարգով իրականացվող միջամտությունները)**<br>- կորոնարոգրաֆիա<br>- սրտամկանի բիոպսիա<br>- համակարգչային տոմոգրաֆիա<br>- Անգիոգրաֆիա | |
| **Ինվազիվ բուժում.**<br>- ներանոթային ստենտի տեղադրում (դեղապատ և ոչ դեղապատ)<br>- բալոնային անգիոպլաստիկա<br>- բարձր հաճախականության էլեկտրաաբլյացիա | |
| **Վիրահատական բուժում**<br>- աորտա-կորոնար շունտավորում<br>- աորտայի պրոթեզավորում (անհետաձգելի դեպքերում՝ աորտայի անևրիզմայի շերտազատում)<br>- աորտայի պրոթեզավորում (քրոնիկ պլանային դեպքերում՝ աորտայի անևրիզմա) | Հատուցվում է տարեկան մինչև 4.000.000 ՀՀ դրամ |
| **Սրտի փականների պլաստիկա, պրոթեզավորում**<br>**Սրտի ռիթմը կարգավորող, վարող սարքերի տեղադրում**<br>**Անոթային վիրահատություններ և միջամտություններ**<br>**Նյարդավիրաբուժական վիրահատություններ և միջամտություններ** | |





ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

# ՔՐՈՆԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄ

| | |
|---|---|
| Վիրաբուժական միջամտություններ, որոնք հանգեցնում են հիվանդության կամ վիճակի լիարժեք ապաքինմանը/պլանային վիրահատություններ/<br>- ճողվածքահատում (աճուկային, ազդրային, որովայնի առաջնային պատի այդ թվում հետվիրահատական)<br>- կրծքագեղձի սեկտորալ մասնահատում, ռադիկալ մասնահատում<br>- թութքահատում<br>- ուղիղ աղիքի ճաքերի վիրահատական բուժում<br>- Ստրումէկտոմիա<br>- խոլեցիստէկտոմիա<br>- վենէկտոմիա (այդ թվում փոքր ինվազիվ վիրահատական միջամտություն)<br>- արթրոսկոպիկ մենիսկէկտոմիա, պարցիալ սինովէկտոմիա<br>- տոնզիլէկտոմիա, ադենոտոնզիլէկտոմիա, հայմորոտոմիա, էթմոդիէկտոմիա, քթի խոռոչի պոլիպների վիրահատական բուժում<br>- կոնսերվատիվ միոմէկտոմիա՝ լապարասկոպիկ, վագինալ հիստերէկտոմիա<br>- արգանդի հեռացում<br>- ծվարանի կիստայի հեռացում, վիրահատություն հավելումների վրա<br>- միզապարկի և շագանակագեղձի ՏՈՒՌ | |
| Ստացիոնար բուժում պահանջող քրոնիկ հիվանդությունների սրացումներ | ✓Հատուցվում է առանց քանակի սահմանափակման |
| Ամբուլատոր բուժում պահանջող քրոնիկ հիվանդությունների սրացումներ | ✓Հատուցվում է առանց քանակի սահմանափակման |
| Քրոնիկ հիվանդությունների պահպանողական բուժում և դինամիկ հսկողություն | ✓Հատուցվում է տարեկան մինչև 40.000 ՀՀ դրամ |



ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

# ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| Խորհրդատվական ընդունելություններ բժիշկ-մասնագետների կողմից, այդ թվում՝ նեղ մասնագետների | |
| Բացառություն հանդիսացող հիվանդությունների և վիճակների գծով առաջնային խորհրդատվություն | |
| Թերապևտիկ հիվանդությունների բուժում (այդ թվում՝ գինեկոլոգիական, ուրոլոգիական, ՔԿԱ համակարգի, ակնաբուժական, մաշկային, Էնդոկրին, սրտաբանություն, նյարդաբանություն) | |
| Վիրաբուժական հիվանդությունների բուժում | |
| Վնասվածքների (կոտրվածքներ, հոդախախտեր, փափուկ հյուսվածքների սալջարդ, վերքեր կամ դրանց համակցում) բուժում | |
| Այրվածքների, ցրտահարությունների և Էլեկտրահարությունների բուժում | |
| Ինֆեկցիոն հիվանդությունների բուժում | |
| Թունավորման թեթև ձևերի բուժում | |
| Ամբուլատոր լաբորատոր-ախտորոշիչ բոլոր տեսակի հետազոտություններ.<br>- բիոքիմիական<br>- հյուսվածքաբանական (հիստոլոգիական)<br>- հորմոնալ<br>- իմունոլոգիական<br>- միկրոբիոլոգիական<br>- ընդհանուր կլինիկական հետազոտություններ<br>- ցիտոլոգիական (բջջաբանական) հետազոտություններ | |
| Ամբուլատոր գործիքային հետազոտությունների բոլոր տեսակներ.<br>- ռենտգենոլոգիական<br>- ուլտրաձայնային<br>- Էնդոսկոպիկ<br>- մամոգրաֆիա<br>- անգիոգրաֆիա<br>- դուպլեքս<br>- Էլեկտրոմիոգրաֆիա<br>- նեյրոֆիզիոլոգիական հետազոտություններ<br>- համակարգչային տոմոգրաֆիա<br>- հոլտեր մոնիտորինգ<br>- Էլեկտրոֆիզիոլոգիական հետազոտություն<br>- մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա | |



ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

# ԴԵՂՈՐԱՅՔ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ

| | |
|---|---|
| Բուժող բժշկի կողմից նշանակված դեղորայքը անվճար ձեռք բերելու հնարավորություն դեղատներից | |
| Դեղորայքի առաքման ծառայություն | |
| Ստացոնար պայմաններում բուժող բժշկի կողմից նշանակված դեղորայքի ծախսերի հատուցում | |
| Ամբուլատոր պայմաններում բուժող բժշկի կողմից նշանակված դեղորայքի ծախսերի հատուցում | |
| Մետաղական կոնստրուկցիաներ, որոնք կիրառվում են վնասվածքաբանական վիրահատությունների ժամանակ | |





ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

| ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | |
|---|---|
| Ակնաբույժի խորհրդատվություններ, հետազոտություններ, ախտորոշում | ✓ |
| Աչքի բազմատեսակ վնասվածքների և հիվանդությունների բուժում թերապևտիկ և վիրաբուժական եղանակներով (այդ թվում նաև կատարակտայի վիրահատություն) | ✓ |
| Օպտոմետրիա (տեսողության ստուգում) | ✓ |
| Տեսողության (դիոպտրիայի) փոփոխության դեպքում օպտիկական ապակիների/լինզաների և շրջանակների ձեռքբերման ծախսերի հատուցում տարեկան մեկ անգամ | ✓ Հատուցվում է 20.000 ՀՀ դրամի սահմաններում |
| Բացառություն են հանդիսանում՝ կոսմետիկ նպատակներով կատարվող վիրահատությունները, տեսողական արատներն ուղղելու նպատակով իրականացվող վիրաբուժությունը | |





ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

# ՀՂԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾՆՆԴՕԳՆՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Հղիության հսկողություն | Հատուցվում է առանց սպասման ժամկետի կիրառման, տարեկան մինչև 80.000 ՀՀ դրամ |
| Ծննդօգնություն՝ ներառյալ կեսարյան հատում | |
| Պաթոլոգիկ ընթացքով հղիության պահպանում ստացիոնար պայմաններում, այդ թվում՝ հակառեզուսային իմունոգլոբուլինի ներարկումներ | |
| Հղիության ընդհատում բժշկական ցուցումներով | |
| Հետծննդյան շրջանում հիվանդասենյակում կացության ծախսերի հատուցում՝ առավելագույնը 5 օր | |





ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

## ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| Օնկոլոգիական հիվանդությունների վիրահատական բուժում | |
| Օնկոլոգիական հիվանդությունների ոչ վիրահատական բուժում (ճառագայթային թերապիա, քիմիոթերապիա և այլն) | ✓Հատուցվում է 500.000 ՀՀ դրամի սահմաններում |

## ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԲՈՒԺԶՆՆՈՒՄ

(տարեկան մեկ անգամ)

Կանխարգելիչ բուժզննումը կազմակերպվում է բացառապես Ապահովագրողի կողմից նշված բժշկական կենտրոններից որևէ մեկում՝ Ապահովագրված անձի նախընտրությամբ

| | |
|---|---|
| Խորհրդատվություններ.<br>- Թերապևտի խորհրդատվություն<br>- Ակնաբույժի խորհրդատվություն<br>- Գինեկոլոգի կամ ուրոլոգի խորհրդատվություն<br>Գործիքային հետազոտություններ.<br>- Որովայնի օրգանների ՈւՁՀ<br>- Փոքր կոնքի օրգանների ՈՒՁՀ<br>- Վահանաձև գեղձի ՈՒՁՀ<br>- Կրծքագեղձի ՈՒՁՀ, առողջական խնդրի հայտնաբերման դեպքում, բժշկի ցուցմամբ՝նաև մամոգրաֆիա<br>- Էլեկտրասրտագրություն<br>- Էխոսրտագրություն/ցուցման դեպքում/<br>Լաբորատոր հետազոտություններ.<br>- Արյան ընդհանուր քննություն<br>- Մեզի ընդհանուր քննություն<br>- Գլյուկոզայի մակարդակի որոշում արյան մեջ<br>- Լիպիդային պրոֆիլ /խոլեստերին/<br>- PAP-քսուք (35 տարեկան և բարձր տարիքի կանանց համար)<br>- PSA (40 տարեկան և բարձր տարիքի տղամարդկանց համար)<br>Տարեկան պարտադիր բուժզննում.<br>- Թոքերի գործիքային հետազոտություն և բժիշկ-թերապևտի զննում<br>- Ռադիոակտիվ նյութերով և ռենտգենյան սարքավորումներով աշխատողների տարեկան պարտադիր բուժզննում | Հատուցվում է տարեկան մեկ անգամ |



ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am



| ԱՏԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ/ԼՐԱՑՈՒՑԻՉ/ | |
|---|---|
| Ախտորոշում և թերապիա<br>✓ Ռենտգեն<br>✓ Օրթոպանտոգրամա<br>✓ Համակարգչային տոմոգրաֆիա | ✓Հատուցվում է տարեկան մինչև 10.000 ՀՀ դրամ |
| ✓ Ուղիների մշակում<br>✓ Կարիեսի և/կամ նրա բարդությունների բուժում<br>✓ Պլոմբավորում լուսակարծրացող պլոմբանյութով | ✓Հատուցվում է Տարեկան 2 ատամի բուժում, այդ թվում` պլոմբավորված ատամների, յուրաքանչյուրը մինչև 20.000 ՀՀ դրամ |
| Վիրաբուժություն (առանց ատամների քանակի սահմանափակման)<br>✓ Ատամի պարզ հեռացում – 4000 ՀՀ դրամ,<br>✓ Ատամի բարդ հեռացում – 7000 ՀՀ դրամ,<br>✓ Իմաստության ատամի հեռացում – 9000 ՀՀ դրամ,<br>✓ Ռետենցված ատամի հեռացում – 12000 ՀՀ դրամ | |
| Պրոֆիլակտիկա<br>✓ Ատամնաքարերի մաքրում<br>✓ Փայլեցում, այդ թվում` Air-Flow եղանակով | ✓Հատուցվում է տարեկան 1 անգամ` մինչև 20.000 ՀՀ դրամ |
| Օրթոպեդիա<br>(օրթոպեդիան` իր մեջ ներառում է պրոթեզավորմանը նախորդող նույն ատամների թերապևտիկ կամ վիրաբուժական բուժման ծախսերը) | ✓Հատուցվում է 40.000 ՀՀ դրամի սահմաններում |
| Իմպլանտացիա<br>(իմպլանտացիան իր մեջ ներառում է իմպլանտի տեղադրումը, աբատմենտը և պրոթեզավորում) | ✓Հատուցվում է 70.000 ՀՀ դրամի սահմաններում |



ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

| ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | |
|---|---|
| **Քթի միջնապատի դեֆորմացիայի և դրանով պայմանավորված վիճակների վիրահատական բուժում (ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում առաջացած միջնապատի դեֆորմացիաների վիրահատական բուժումը հատուցվում է 100%-ով)** | ✓Հատուցվում է տարեկան մինչև 150.000 ՀՀ դրամ |
| **Ֆիզիոթերապիա (Էլեկտրոֆորեզ, ֆոնոֆորեզ, կրիոթերապիա, գերբարձր հաճախականության թերապիա, ուլտրաձայնային թերապիա, Էլեկտրոստիմուլյացիա), Լազերաթերապիա, Կինեզոթերապիա** | ✓Հատուցվում է տարեկան մեկ կուրս |
| **Ողնաշարի ճողվածքի վիրահատական բուժում** | ✓Հատուցվում է տարեկան մինչև 400.000 ՀՀ դրամ |
| **Ողնաշարի դեգեներատիվ դիստրոֆիկ ախտահարումների փոփոխությունների հետ կապված բուժում և հետազոտում** | ✓Հատուցվում է տարեկան մինչև 40.000 ՀՀ դրամ |
| **Բուժում արտասահմանում**<br>**ՀՀ տարածքից դուրս Ապահովագրված անձի բուժումը հատուցվում է, եթե՝**<br>**ա/ նախատեսված է ապահովագրական ծածկույթով,**<br>**բ/ հնարավոր է չէ բուժել ՀՀ-ում,**<br>**գ/ ախտորոշվել է ՀՀ-ում,**<br>**դ/ ՀՀ-ում բուժվելու ընթացքում դրական առաջխաղացում չի դիտվել:** | ✓Հատուցվում է ՀՀ-ում տվյալ ծառայության համար գործող միջին գնի սահմաններում |
| **Երկրորդ կարծիք.**<br>**Եթե Ապահովագրված անձը համաձայն չէ բժշկի եզրակացության հետ, նա կարող է իր հաշվին անցնել 2-րդ հետազոտությունը: Եթե, արդյունքում, եզրակացությունները Էապես տարբերվում են, Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու անցնել 3-րդ հետազոտությունը (տվյալ ոլորտում առաջատար մասնագետի մոտ), որն իրականացվում է Ապահովագրողի հաշվին: Եթե 3-րդ կարծիքը Էապես տարբերվում է 1-ին մասնագետի տրամադրած եզրակացությունից Ապահովագրողը հատուցում է 2-րդ կարծիքի հետ կապված ծախսերը, հակառակ դեպքում այն հատուցման ենթակա չէ:** | ✓Հատուցվում է |



ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

## ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

**Ստորև նշված հիվանդությունները, ախտաբանական երևույթները, դրանց հետևանքները և դրանց ախտորոշման և բուժման հետ կապված բոլոր բժշկական ծախսերը ենթակա չեն հատուցման, եթե այլ բան նախատեսված չէ ծածկույթում:**

1. Ժառանգական և գենետիկ նախատրամադրվածություն ունեցող հիվանդություններ՝ պարբերական հիվանդություն, Էպիլեպսիա և այլն: Բնածին արատներ, զարգացման անատոմիական առանձնահատկություններ (դրանց բարդություններ), ողնաշարի միջողնային սկավառակների ախտահարումներ, կեցվածքի խախտումներ, դեգեներատիվ-դիստրոֆիկ փոփոխություններ (օրինակ՝ օստեոխոնդրոզ) (բացառությամբ ծրագրով նախատեսված սահմանաչափի):
2. Քրոնիկ հիվանդություններ և/կամ տարիքային փոփոխություններ, որոնք պահանջում են մշտական, և/կամ պահպանողական բուժում և դինամիկ հսկողություն (օրինակ՝ հիպերտոնիկ հիվանդություն, սրտի իշեմիկ հիվանդություն, վիճակ ԱԿՇ-ից և կորոնար անոթների ստենտավորումից հետո, աթերոսկլերոզ, դիսցիրկուլյատոր էնցեֆալոպաթիա, քրոնիկական երիկամային անբավարարություն և այլն) (բացառությամբ ծրագրով նախատեսված դեպքերի): Ապահովագրված անձի կողմից բժշկի նշանակումներին չհետևելու կամ դրանցից հրաժարվելու հետևանքով առաջացած ծախսերը: Առանց բժշկի գրավոր ցուցումի կատարված ցանկացած բժշկական ծառայության վերաբերող ծախս:
3. Հոգեկան հիվանդություններ և շեղումներ, նևրոզների վերաբերյալ խորհրդատվության, հետազոտման (ներառյալ դիֆերենցիալ դիագնոստիկա) և բուժման ծախսեր (ասթենո-նևրոտիկ համախտանիշ, վեգետո-անոթային դիստոնիա և այլն), հոգեթերապևտի ծառայություններ:
4. Վարակային այնպիսի հիվանդությունների վերաբերյալ խորհրդատվության, հետազոտման և բուժման ծախսեր, որոնք փոխանցվում են առավելապես սեռական ճանապարհով՝ գոնորեա, սիֆիլիս, խլամիդիոզ, միկոպլազմոզ, տրիխոմոնիազ, ցիտոմեգալովիրուս, ուրեոպլազմոզ, գարդներելիոզ, անալ և գենիտալ հերպես և այլն:
5. ՄԻԱՎ վարակ, ՁԻԱՀ և այլ հաստատված իմունաանբավարարության վիճակներ: Բոլոր տեսակի վիրուսային հեպատիտներ:
6. Հատուկ վտանգավոր ինֆեկցիոն հիվանդություններ; Բացիլակրություն, վիրուսակրություն, ճիճվակրություն; Տուբերկուլյոզ; Միկոզներ:
7. Աուտոիմուն հիվանդությունների վերաբերյալ խորհրդատվության, հետազոտման և բուժման ծախսեր: Շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդությունների վերաբերյալ խորհրդատվության, հետազոտման և բուժման ծախսեր (համակարգային կարմիր գայլախտ, ռևմատոիդ արթրիտ, դերմատոմիոզիտ և այլն), համակարգային վասկուլիտներ (հանգուցավոր պերիարտերիիտ, հեմոռագիկ վասկուլիտ և այլն), քրոնիկական արթրոզներ: Պսորիազ, Էկզեմա:



ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

## ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

8. Նյարդային համակարգի դեմիելինիզացնող հիվանդությունների վերաբերյալ խորհրդատվության, հետազոտման (ներառյալ դիֆերենցիալ դիագնոստիկա) և բուժման ծախսեր:
9. Արտահայտված էնդոկրինոպաթիաների վերաբերյալ խորհրդատվության, հետազոտման (ներառյալ լաբորատոր-գործիքային և դիֆերենցիալ դիագնոստիկա) և բուժման ծախսեր, շաքարային դիաբետ (I և II տիպ) և դրա բարդություններ:
10. Բուժման և հետազոտման եղանակներ, որոնց կիրառման վերաբերյալ չկան գիտական, ստույգ հեռահար տվյալներ՝ ֆիտոթերապիա, հոմեոպաթիա, տզրուկաբուժություն, աուրիկուլոդիագնոստիկա, իրիդոդիագնոստիկա, ակուպունկտուրային դիագնոստիկա, պուլսոդիագնոստիկա և այլն:
11. Ռեկոռոնարոգրաֆիա և ռեստենտավորում: Լազերային թերապիա, օզոնաթերապիա, պլազմոֆերեզ, հեմոսորբցիա, հիպերբարիկ օքսիգենացում, ալֆա-կապսուլա, բարձր հաճախականության էլեկտրոաբլյացիա:
12. Պլաստիկ և վերականգնողական վիրաբուժական և/կամ կոնսերվատիվ բուժում, պրոթեզավորում: Քթի միջնապատի դեֆորմացիաների մինչվիրահատական և հետվիրահատական բարդությունների և/կամ բարդացումների վիրահատական և/կամ կոնսերվատիվ բուժում (բացառությամբ ծրագրով նախատեսված դեպքերի և այն դեպքերի, եթե դրանք անհրաժեշտ են Ապահովագրության գործողության ժամկետում տեղի ունեցած և Պայմանագրով նախատեսված դժբախտ պատահարի արդյունքում և կատարվում են վնասված օրգանի ֆունկցիոնալ վերականգնման նպատակով): Ընդ որում դժբախտ պատահարը պետք է տեղի ունենա սույն պայմանագրի գործողության ընթացքում և ունենա համապատասխան փաստաթղթային ապացույց, տրված համապատասխան լիազորված մարմնի կողմից (Ոստիկանություն և այլն): Սույնով դժբախտ պատահար է համարվում Ապահովագրված անձի կամքից դուրս տեղի ունեցած արտաքին, հանկարծակի, պատահական, անսպասելի, կարճաժամկետ (մինչև մի քանի ժամ տևողությամբ) իրադարձություն (դեպք), որի հետևանքով պատճառվել է մարմնական վնասվածք:
13. Կոսմետիկ և հոգեբանական վիճակը բարելավելու նպատակով կատարված հետազոտման, բուժման, միջամտությունների ծախսեր (այդ թվում՝ պապիլոմաների, պոլիպների, աթերոմաների, գորտնուկների, խալերի և այլ էլեմենտների հեռացում): Տեսողության դեղորայքային և/կամ վիրաբուժական (լազերային) շտկում, քաշի դեղորայքային և/կամ վիրաբուժական շտկում:
14. Վերարտադրողական ֆունկցիայի խանգարում, և դրա հետ կապված խորհրդատվություն, հետազոտում և բուժում (օրինակ՝ սեռական հորմոնալ դիսֆունկցիա, դիսմենորեա, դրանց ախտորոշում և բուժում), հակաբեղմնավորիչ միջոցներ: Ոչ բժշկական ցուցումներով հղիության արհեստական ընդհատում: Էքստրակորպորալ բուժման մեթոդներ:
15. Սանատոր-առողջարանային բուժում:



ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

## ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

16. ՀՀ-ում սահմանված կարգով չարտոնագրված դեղորայք: Բժշկական պարագաներ:
17. Ալկոհոլամոլություն, թմրամոլություն և թունամոլություն: Հիվանդություններ, որոնք առաջացել են Ապահովագրված անձի կողմից ալկոհոլի և/կամ թմրադեղերի, և/կամ, թունաքիմիկատների օգտագործման հետևանքով: Վնասվածքներ, որոնք առաջացել են ալկոհոլի և կամ թունաքիմիկատի և կամ թմրադեղի ուղակի ազդեցության հետևանքով և պատճառով:, Հիվանդություններ և կամ վնասվածքներ, եթե այդպիսիք առաջացել են Ապահովագրված անձի հակաիրավական գործողություններ իրականացնելիս:
18. Վնասվածքներ և հիվանդություններ, որոնք ի հայտ են եկել ինքնասպանության փորձի, ինքնավնասման հետևանքով, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովագրված անձը վերոհիշյալ գործողությունը կատարել է երրորդ անձանց պարտադրանքով:
19. Աշխատանքի կամ ուսումնական վայր ընդունվելու, զենք կրելու, արտասահման մեկնելու, դեսպանատներ և այլ հաստատություններ ներկայացնելու համար տեղեկանքների ձեռքբերման հետ կապված ծախսեր:
20. Օրթոպեդիկ կոշիկներ, բարձեր, սայլակներ, պրոթեզներ և/կամ պրոթեզավորում, Էնդոպրոթեզներ և/կամ Էնդոպրոթեզավորում, լսողական սարքեր և այլ բժշկական պարագաներ, սույն կետում նշված բացառությունները չեն վերաբերում` սրտի վիրահատական միջամտություններին, այդ թվում` սրտի փականների պրոթեզներին, սրտի ռիթմը վարող սարքերի իմպլանտներին:
21. Ատամնաբուժական ծածկույթից դուրս իրականացված ծախսեր
22. Ծրագրում չընդգրկված ցանկացած բժշկական ծառայություն և բժշկական նշանակության ապրանք:
23. Ապահովագրողն ազատվում է հատուցում վճարելու պարտականությունից, եթե ապահովագրական պատահարն արդյունք է հետևյալ դեպքերի`
    - Միջուկային պայթյուն, ճառագայթում, ռադիոակտիվ կամ քիմիական վարակ.
    - Ռազմական գործողություններ.
    - Քաղաքացիական պատերազմ, ամեն տեսակի հասարակական հուզումներ կամ գործադուլներ.
    - Օրենքով նախատեսված այլ դեպքեր:



ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

## ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- Ծածկույթային ծրագրի ներքո կարող են ապահովագրվել միայն Ապահովադրի ապահովագրված աշխատողների ընտանիքի անմիջական անդամները՝ մինչև 21 տարեկան զավակ(ներ), մինչև 65 տարեկան ամուսին/կին, ծնող(ներ):
- Աշխատողի ընտանիքի անմիջական անդամները կարող են ապահովագրվել Ծածկույթային ծրագրով նախատեսված նույն պայմաններով հետևյալ կարգով՝
- Տվյալ աշխատողի ապահովագրության գործողության սկզբից հետո մեկ ամսվա ընթացքում:
- Ծածկույթային ծրագրի ներքո ապահովագրված անձ-աշխատողի ամուսնության դեպքում ամուսինը կարող է ապահովագրվել ամուսնության օրվանից մեկ ամսվա ընթացքում:
- Ծածկույթային ծրագրի ներքո ապահովագրված անձ-աշխատողի զավակ(ներ)ի ծննդյան դեպքում զավակ(ներ)ը կարող են ապահովագրվել ծննդյան օրվանից մեկ ամսվա ընթացքում:
- Ընդ որում Ապահովագրված անձ-աշխատողի ընտանիքի անդամի ապահովագրության դեպքում Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու ներկայացնել ընտանեկան կապը հաստատող փաստաթուղթ:
- Ընտանիքի անդամների համար գործում են հետևյալ ապահովագրավճարները՝
  - Ընտանիքի մինչև 0-17 տարեկան անդամի ապահովագրավճարի վրա կիրառվում է 1 գործակից,
  - Ընտանիքի 18-40 տարեկան անդամի ապահովագրավճարի վրա կիրառվում է 1.3 գործակից ,
  - Ընտանիքի 41-65 տարեկան անդամի ապահովագրավճարի վրա կիրառվում է 1.5 գործակից,
- Նույն ընտանիքից 3 և ավելի ընտանիքի անդամի միաժամանակյա ապահովագրության դեպքում յուրաքանչյուր ապահովագրվող ընտանիքի անդամի համար կիրառվում է 0.9 գործակից:
- Ապահովագրությունը գործում է ՀՀ տարածքում:
- Նշանակված դեղորայքը կամ ախտորոշիչ հետազոտությունները հատուցվում են միայն այն հիվանդությունների կապակցությամբ, որոնք ներառված են ծրագրում:



ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

# ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

## Տարբերակ 1
## ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՄԵԶ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

- Նախապես անհրաժեշտ է զանգահարել «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի շուրջօրյա գործող **011/012-560404** հեռախոսահամարով և ընկերության աշխատակցին հայտնել Ապահովագրված անձի անուն, ազգանունը, գանգատները, դրանց առաջացման ժամկետը, Ապահովագրված անձի նախընտրած բժշկական կենտրոնը մեր ընկերության կողմից տրամադրված ցանկից, եթե այդպիսին առկա է:
- Եթե ծառայությունները իրականացվել են Ընկերության միջոցով և լրացուցիչ գումար չի վճարվել Ապահովագրված անձի կողմից, ապա վճարումները կատարվում են ծառայություն մատուցած բժշկական կենտրոնին, և Ապահովագրված անձը հավելյալ փաստաթուղթ ներկայացնելու պարտավորություն չունի: Այն դեպքերում, երբ առկա են Ապահովագրված անձի կողմից վճարումներ, ապա հատուցման գործընթացը իրականացվում է Տարբերակ 2-ի պայմաններով:

## Տարբերակ 2
## ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՄԵԶ ՀԵՏ ՉՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

- Նախապես անհրաժեշտ է զանգահարել «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի շուրջօրյա գործող **011/012-560404** հեռախոսահամարով և ընկերության աշխատակցին հայտնել Ապահովագրված անձի անուն, ազգանունը, գանգատները, դրանց առաջացման ժամկետը, Ապահովագրված անձի նախընտրած բժշկական կենտրոնը:
- Ծածկույթի շրջանակներում բժշկական ծառայությունները ստանալուց հետո, պայմանագրի գործողության ընթացքում անհրաժեշտ է կամ մոտենալ մեր գրասենյակ՝ Խանջյան 13 հասցեով, կամ **medical@armeniainsurance.am** էլեկտրոնային փոստին և/կամ **viber/whatsApp +374 (41) 560404** հավելվածի միջոցով ներկայացնել հատուցման դիմում-հայտ՝ կից բժշկական և ֆինանսական փաստաթղթերը*:



ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

# ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հայտի շրջանակներում վերջին փաստաթուղթը Ապահովագրված անձի կողմից ներկայացնելու օրվանից 1(մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Անձնական պահանջների կարգավորման վարչության կողմից հայտը կարգավորվում է (կազմվում է հատուցման/մերժման եզրակացություն), իսկ դրական եզրակացության դեպքերում եզրակացության ամսաթվից 2(երկու) աշխատանքային օրվա ընթացքում կատարվում է վճարում: Վճարումը կատարվում է Ապահովագրված անձի բանկային հաշվեհամարին





ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

## ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԺՇԿԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ*

- բժշկական տեղեկանք (բժշկական կենտրոնի կնիքով),
- խորհրդատվական եզրակացություն (բժշկական կենտրոնի կնիքով), կամ
- քաղվածք ամբուլատոր քարտից (բժշկական կենտրոնի կնիքով), կամ
- Էպիկրիզ (բժշկական կենտրոնի կնիքով),
- պարակլինիկական հետազոտությունների պատասխաններ (անհրաժեշտության դեպքում):

***Վնասի չափը հաստատող փաստաթղթեր,եթե ծախսը իրականացվել է Ապահովադրի կողմից ինքնուրույն `***

- հաշիվ-պահանջագիր, կամ
- դրամարկղային ֆիսկալային կտրոն կամ դրամարկղի մուտքի օրդեր (կանխիկ վճարման դեպքում) կամ ՀԴՄ կտրոն համապատասխան հաշիվ-ապրանքագրով,
- բուժհաստատության կողմից համապատասխան ձևաթղթի վրա տրված տեղեկանք, որը հաստատված է (կնքված է) բուժհաստատության կողմից և հավաստում է բժշկական ծախսի չափը,
- վնասվածքների և երրորդ անձանց մասնակցությամբ պատահարների վերաբերյալ համապատասխան լիազոր մարմնի եզրակացությունը/որոշումը:





ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ք. Երևան

1. «Էրեբունի բժշկական կենտրոն» ՓԲԸ, Տիտոգրադյան 14
2. «Նաիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ, Պարոնյան 21
3. «Արմա Մաքս» ախտորոշման կենտրոն, Պարոնյան 21
4. «Շենգավիթ բժշկական կենտրոն» ՓԲԸ, Մանանդյան 9
5. «Արմենիա հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ, Մարգարյան 6
6. «Իզմիրյան բժշկական կենտրոն» ՓԲԸ, Ահարոնյան 6
7. «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ, Ֆանարջյան 76
8. «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ («Թիվ 1 հիվանդանոցային համալիր»), Աբովյան 60
9. «Մուրացան» հիվանդանոցային համալիր, Մուրացանի 114
10. «Ս.Վ.Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» ՓԲԸ, Ֆուչիկի 30
11. «Մալայան» ՍՊԸ, Ձորափի 4/3
12. «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ, Արտաշիսյան 46/1
13. «Աստղիկ» բժշկական կենտրոն, Դանիել Վարուժան 28
14. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ, Արմենակ Արմենակյան 108/4
15. «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» ՓԲԸ, Նոր Նորք 9-րդ փող., 123 շենք
16. «Մեփլ Լիֆս հայ-կանադական բժշկական կենտրոն» ՍՊԸ, Արմենակ Արմենակյան 129
17. «Նորմեդ» բժշկական կենտրոն
    - Հր. Ներսիսյան 12/6
    - Նալբանդյան 25/14
18. «Միբս» բժշկական կենտրոն, Բագրատունյաց 1
19. «Պրոտոն» ախտորոշիչ կենտրոն, Մանանդյան 9
20. «ՄեդԷքսպրեսս» ՍՊԸ, Վ. Վաղարշյան 22
21. «Էներգո Արմ» ՍՊԸ, Հալաբյան 9/7
22. «Դիագնոստիկա բժշկական միավորում» ԲԲԸ, Մարգարյան 6/1
23. «ԱՅ.ՍԻ.ՋԵԹ.» ՍՊԸ - «Դա Վինչի» կլինիկա, Հնդկաստանի 2
24. «Արիամեդ» - «Արիանա 22» ՍՊԸ, Մալաթիա-Սեբաստիա ՎՇ, Նոյի 151
25. «Ավանգարդ բժշկական կենտրոն» ՍՊԸ, Մարշալ Բաբաջանյան 7/7
26. «Երևան բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ, Հր. Ներսիսյան 7
27. «Պրոֆ. Ռ.Օ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ, Հր. Ներսիսյան 7
28. «Էլիտ-Մեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ, Հ. Հակոբյան 3/15
29. «Սիրմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ, Փ. Բուզանդի 7-10
30. «ԿարդիոԼայֆ բժշկական կենտրոն» ՍՊԸ, Հր. Քոչարի 1



ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31. «Սլավմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ, Բաղրամյան պող., 3-րդ նրբ., 4/2
32. «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ,Էզրաս Հասրաթյան 9
33. «Բեստ Լայֆ բժշկական կենտրոն» ՍՊԸ, Ֆանարջյան 55
34. «Աջափնյակ բժշկական կենտրոն» ՍՊԸ, Աբելյան 8/1
35. «Սանիտա» ՍՊԸ - «Տոնոյան» բժշկական կենտրոն, Բագրատունյաց 2-րդ նրբ., 23 շենք
36. «Կրիոգեն Կլինիկ» ՍՊԸ, Վահրամ Փափազյան 29
37. «Աքսիոմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ, Տերյան 3, տարածք 42
38. «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ, Արամի 54
39. «Գրիգոր Նարեկացի բժշկական կենտրոն» ՓԲԸ, Նոր-Արեշ, 22-րդ փող., 63/1 շենք
40. «ԼՕՌԷՍԹ բժշկական կենտրոն» ՍՊԸ, Պուշկինի 56/1
41. «Էնա Կլինիկ» ՍՊԸ, Հ. Հակոբյան 3/15
42. «Էվա Մեդ» ՓԲԸ, Կոմիտաս 59/6, տարածք 46
43. «Ցիտո» բժշկական կենտրոն, Հր. Ներսիսյան 14/1
44. «Սինոմեդ» ԲԿ - «Ավամեդ Ինտեգրատիվ Մեդիքալ Սենթր» ՍՊԸ, Հր. Ներսիսյան 14/1
45. «Հայ-Ամերիկյան դիագնոստիկ կլինիկա» ՍՊԸ, Տիգրան Մեծի փող., 74շ., բն.27
46. «Դալի Մեդ» ՍՊԸ, Լեոյի փող., 1-ին շենք., 1-ին հարկ
47. «Բեգլարյան բժշկական կենտրոն» ՓԲԸ, Աբովյան 56
48. «Վիժնմեդ ակնաբուժական կլինիկա» ՍՊԸ, Հյուսիսային ճառագայթ փող., 2-րդ շենք
49. «Վիտա Լոնգա» ՍՊԸ, Լենինգրադյան 4/9
50. «Մեդլայն Կլինիկ» ՍՊԸ, Ռոստովյան 17/1
51. «Ավագ» բժշկական կենտրոն - «Առողջ կյանքի ուղի» ԲՀԿ, Տ. Պետրոսյան 48/1
52. «ՀերաՄեդ» ՍՊԸ - «Մեդիկուս բժշկական կենտրոն» ՓԲԸ, Գայի պող., 4-րդ շենք
53. «Ռոյալ Կլինիկ» ՍՊԸ, Սայաթ-Նովա 8
54. «Քանաքեռ-Զեյթուն» ծննդատուն, Հր. Ներսիսյան 7/2
55. «Իքս Պլան» ՍՊԸ - «Քեյ Ռեյ» ախտորոշիչ կենտրոն, Նանսենի 13/2
56. «Լավանդա» - «Նորֆարմ» ՍՊԸ, Տիգրան Մեծ 17
57. «Սիթի Սկան» դիմածնոտային ախտորոշիչ կենտրոն, Կ. Ուլնեցու փող., 51շ., բն.30



ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

58. «Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոն - «Արինտերլև» ՍՊԸ
- «Վարդանանց» մասնաճյուղ - Վարդանանց փող., 18/1 շենք
- «Դեմիրճյան» մասնաճյուղ - Դ. Դեմիրճյան փող., 38 շենք
- «Հրաչյա Քոչար» մասնաճյուղ – Հր. Քոչարի փող., 35/1 շենք
- «Նանսեն» մասնաճյուղ - Նոր Նորքի 1-ին զանգված, Գայի պող., 10/7 շենք

59. «Վիտա Մեդ» ՍՊԸ, Բեկնազարյան 3/6
60. «ԷՅ-ԲԻ-ՍԻ բժշկական կենտրոն» ՍՊԸ, Հր. Ներսիսյան 1
61. «Նոր Հայացք» ակնաբուժական կլինիկա, Առնո Բաբաջանյան 58/1
62. «Ուիգմոր Գրուփ» ФԲԸ, Հր. Ներսիսյան 10/7
63. «Այրվածքաբանության և մաշկաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ
- Այրվածքաբանության մասնաշենք - Դավթաշեն 24ա շենք
- Մաշկաբանության մասնաշենք - Ֆուչիկի 32

64. «Դիամեդ» - «Մեդիտեկ Գրուպ» ՍՊԸ, Նոր-Նորքի 7-րդ զանգված, Հունան Ավետիսյան 84
65. «Դավիդյանց» պոլիկլինիկաներ, Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 33/3 շենք
66. «Մոր և մանկան պահպանման գիտահետազոտական կենտրոն» ՓԲԸ, Մաշտոցի պող., 22 շենք
67. «Ցիտադել ակնաբուժական կենտրոն ՍՊԸ», Տերյան 105/1
68. «Հայ-ամերիկյան առողջության կենտրոն» հիմնադրամ, Մխ. Հերացու 5
69. «Աչքի առողջության ինստիտուտ» ՍՊԸ, Բագրևանդ 8/1
70. «Ձիլֆյան աչքի խնամքի կենտրոն» ՍՊԸ, Վերին Անտառային 160/7, տարածք 38
71. «Ավստրիա Գրուպ» ՍՊԸ, ք. Երևան, Պարոնյան 9, տարածք 43



ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարզեր

1. «Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Եղվարդ, Չարենցի 196
2. «Ռ.Հ. անվ. Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Աբովյան, Հատիսի 6
3. «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Հրազդան, Մարշալ Բաղրամյան թաղ., Պուրակային 32
4. «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Սևան, Նաիրյան 169
5. «Զարիշատ /Արամ/ Մարտինի Մկրտչյանի անվ. Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Արմավիր, Շահումյան 3
6. «Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Մեծամոր, 2-րդ թաղամաս, 24ա շենք
7. «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Աշտարակ, Երևանյան 14
8. «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Արտաշատ, Արամ Խաչատրյան 116
9. «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Գյումրի, Գ. Նժդեհի 3/3
10. «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Մասիս, Մխ. Հերացու 1
11. «Թալինի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Թալին, Քոթանյան 10
12. «Արարատի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Արարատ, Խանջյան 59
13. «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Գավառ, Ազատության 21
14. «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Մարտունի, Գետափնյա 2/16-1
15. «Վարդենիսի հիվանդանոց» ՓԲԸ, ք. Վարդենիս, Համբարձումյան 34
16. «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Ալավերդի, Սայաթ-Նովա 20
17. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Վանաձոր, Գ. Նժդեհի 2/42
18. «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Ապարան, Գ. Նժդեհի 21
19. «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Բերդ, Ալեք Մանուկյան 25
20. «Ն.Նասիբյանի անվ. Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15
21. «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Իջևան, Նալբանդյան 1
22. «Դիլիջանի բժշկական կենտրոն» - «Իռ-Վինգ» ՍՊԸ, ք. Դիլիջան, Սայաթ-Նովա 7
23. «Վայքի բուժական միավորում» ՓԲԸ, ք. Վայք, Շահումյան 91
24. «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Սիսիան, Խանջյան 1բ
25. «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Գորիս, Տաթևացու 31
26. «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Կապան, Մելիք-Ստեփանյան 13



ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարզեր

27. «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Քաջարան, Բակունցի 1
28. «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Մեղրի, Գործարարների 42
29. «Հիգեա բժշկական կենտրոն» ՍՊԸ, ք. Կապան, Մելիք-Ստեփանյան 6/1
30. «Ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոն», Սյունիքի մարզ, գ. Ակներ, Խաղաղության 15/1
31. «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Սպիտակ, Երևանյան խճուղի, 1 շենք
32. «ՄՌՏ Էքսպերտ Անդրկովկաս» ՍՊԸ, ք Գյումրի, Գ. Նժդեհի 3/3
33. «Չարենցավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ, ք. Չարենցավան, Երիտասարդության փող.,8 շենք
34. «Նորմեդ» բժշկական կենտրոն
- ք. Վանաձոր, Գ. Նժդեհի 24
- ք. Գյումրի, Տիգրան Մեծի 8
35. «Ռաիգրուպ» ՍՊԸ - «ՄՌՏ Էքսպերտ Հրազդան», ք. Հրազդան, Մարշալ Բաղրամյան թաղ., Պուրակային 32
36. «Արմա Մաքս» ախտորոշման կենտրոն
- ք. Դիլիջան, Սայաթ-Նովա 7/3
- ք. Գյումրի, Գ. Նժդեհի 33
- ք. Կապան, Շահումյան 24
37. «Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոն - «Արինտերլև» ՍՊԸ
- ք. Վանաձոր, Թատերական 2
- ք. Սևան, Նաիրյան 169
38. «Վիտա Մեդ» ՍՊԸ
- ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 23
- ք. Չարենցավան, 4-րդ թաղամաս, 19 շենք



ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լաբորատորիաներ

1. «Էկոսենս» ՍՊԸ
- ք. Երևան, Հր. Քոչար 7/3
- ք. Երևան, Փ. Բուզանդ 53-55
- ք. Երևան, Մխ. Հերացի 5
- ք. Երևան, Մանթաշյան 26
- ք. Երևան, Գայի պող. 19/27
- ք. Երևան, Կոմիտաս 44
- ք. Երևան, Հ. Մարգարյան 17
- ք. Հրազդան, Զորավար Անդրանիկի պող., 109 շենք
- ք. Գավառ, Ազատության փող., 14 շենք
- ք. Մարտունի, Նարեկացու փող., 6 շենք
- ք. Վանաձոր, Տիգրան Մեծ 26
- ք. Իջևան, Երևանյան 12
- ք. Գյումրի, Ռուսթավելու փող. 62/2
- ք. Կապան, Լեռնագործների փող., 5ա / 4/4

2. «Էկոսենս պլյուս» ՍՊԸ, ք. Գյումրի, Գ. Նժդեհի 7/33
3. «Բլադ Սելս» ախտորոշիչ կենտրոն
- ք. Երևան, Ռուբինյանց փող., 2/5 շենք
- ք. Երևան, Սարյան փող., 25 շենք
- ք. Երևան, Կոմիտաս 44
- ք. Երևան, Մաշտոցի 22
- ք. Երևան, Տիգրան Մեծի պող., 74 շենք
- ք. Երևան, Պուշկինի 56
- ք. Երևան, Հր. Ներսիսյան 10/7
- ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 2
- ք. Արմավիր, Հանրապետության 29/3
- ք. Արթիկ, Տուֆագործների 18/3
- ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ 15/2

4. «Եվրոլաբ» ախտորոշիչ լաբորատորիա
- «Կենտրոն» մասնաճյուղ - ք. Երևան, Իսահակյան փող., 14/22 շենք
- «Մալաթիա» մասնաճյուղ - ք. Երևան, Րաֆֆու փող., 29/6 շենք
- «Տաշիր» մասնաճյուղ - ք. Տաշիր, Ջահուկյան 8/1



ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լաբորատորիաներ

5. «Ինվիտրո» - «Դյուցազն» ՍՊԸ
- ք. Երևան, Ազատության պող., 9 շենք
- ք. Երևան, Մովսես Խորենացու փող., 3 շենք
- ք. Երևան, Կոմիտասի պող., 34 շենք, տարածք 10
- ք. Երևան, Բագրատունյաց փող., 16-144 շենք
- ք. Արմավիր, Հանրապետության փող., 21-4 շենք
- ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի փող., 13 շենք
- ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պող., 13 շենք



ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Ատամնաբուժական կենտրոններ

1. «Ա Ստոմ» - «Աբրահամյան Մեդիքալ Սենթր» ՍՊԸ, ք. Երևան, Կոմիտասի պող., 26 շենք
2. «Լեգեոն» բժշկական կենտրոն - «Առիգ-Մեդ» ՍՊԸ, ք. Երևան, Բարձրաբերդի 7/7
3. «Մակտուս Դենտ» ՍՊԸ, ք. Երևան, Րաֆֆու 19
4. «Լիդեր-ԷՖ» ատամնաբուժական կլինիկա
   - ք. Երևան, Կորյունի 7/1
   - ք. Երևան, Ուլնեցու 31/9
   - ք. Երևան, Մուրացան 113/2
   - ք. Երևան, Նոր Նորքի 6-րդ զանգված
5. «Մեդեսի» ՍՊԸ, ք. Երևան, Սասնա Ծռեր 2/4
6. «Էլտիգ» ՍՊԸ - «Պերֆեկտա» ՍՊԸ, ք. Երևան, Աբովյան 44/6
7. «Էվա Մեդ» ՍՊԸ, ք. Երևան, Կոմիտաս 59/6, տարածք 46
8. «Սինոմեդ» ԲԿ - «Ավամեդ Ինտեգրատիվ Մեդիքալ Սենթր» ՍՊԸ, ք. Երևան, Հր.Ներսիսյան 14/1
9. «Կլանսե» ՍՊԸ, ք. Երևան, Նանսենի փող., 7 շենք
10. «Վենտուռա Դենտալ» ՍՊԸ, ք. Երևան, Մամիկոնյանց 3
11. «Յունիդենտ» - «Գլածոր համալսարան» ԱԿ, ք. Երևան, Գրիգոր Լուսավորիչ 7/1
12. «Վելլնեսս» դենտալ կլինիկ, ք. Երևան, Բաղրամյան պող. 33/33
13. «ԱԷսթետիկ» դենտալ կլինիկ, ք. Երևան, Մաշտոցի պող. 54ա
14. «Արա Գաբրիելյան» ԱՁ, ք. Կապան, Հ. Ավետիսյան 12/55
15. «Նյու Հոպ» ՍՊԸ, Մաշտոցի պող. 6/87



ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Դեղատներ

1. «Բեյբի Լենդ» ՍՊԸ, ք. Երևան, Վ.Վաղարշյան 17/13
2. «Էքսպրես ֆարմ» ՍՊԸ, ք. Երևան, Առնո Բաբաջանյան փող., 16/55
3. «Be Healthy» - «Բի հելֆի» - «Արթուր Ալավերդյան» ԱՁ

- ք. Երևան, Նանսենի փող. 2, տարածք 45
- ք. Երևան, Փ.Բուզանդի 1 շենք, տարածք 53



ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Օպտիկայի խանութ-սրահներ

1. «Մայր Օպտիկս», ք.Երևան, Գր. Լուսավորիչ 3/76
2. «Լույս Օպտիկ»
- ք. Երևան, Նալբանդյան 59
- ք. Երևան,  Բագրատունյանց 14
- ք. Երևան, Տարոնց 9/3
3. «Դանզ Օպտիկ»
- ք. Երևան, Զաքյան 4 (Օպտիկական հատված)
- ք. Երևան, Կոմիտասի 17 (Օպտիկական հատված)
- ք. Երևան, Դալմա Գարդեն Մոլ, Ծիծեռնակաբերդի խճուղի 3
- ք. Երևան, Ռիո Մոլ, Վահրամ Փափազյանի 8
- ք. Երևան, Մեգամոլ, Գայի պողոտա 16
- ք. Երևան, Երևան Մոլ, Արշակունյաց պողոտա 34
- Կոտայքի մ., Մուլտի Մեջիք Մոլ, Վերին Պտղնի 5րդ փողոց, 1 փկղ, 5 շենք



ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04   +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տարեկան պրոֆիլակտիկ բժշկական զննությունը կազմակերպվում է բացառապես ստորև նշված բժշկական կենտրոններում՝ Ապահովագրված անձի նախընտրությամբ (տարեկան մեկ անգամ)

1. Շենգավիթ ԲԿ
2. Էլիտ-Մեդ ԲԿ
3. Մեդլայն ԲԿ
4. Մեփլ Լիֆս հայ-կանադական
5. Աջափնյակ ԲԿ
6. Կրիոգեն Կլինիկ
7. Ցիտո ԲԿ
8. ՄեդԷքսպրեսս ԲԿ
9. Վարդանանց ԲԿ
10. Դալի Մեդ
11. Ռոյալ Կլինիկ
12. Դիագնոստիկա ԲԿ
13. Դավիդյանց պոլիկլինիկա



ARMENIA INSURANCE
+374 11 56 04 04 +374 12 56 04 04
Վարդանանց 16, տարածք 1/1
www.armeniainsurance.am
info@armeniainsurance.am

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՄԵԶ ԸՆՏՐԵԼՈՒ ԵՎ ՎՍՏԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՄԻԱՍԻՆ

ԱՊԱՀՈՎ Է

ARMENIA
INSURANCE